

**Հարցաշար**  
**Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի**

**12-րդ դասարան**

**Տևողությունը 150 րոպե**

Ոչ մեկին ստրկորեն մի՛ ենթարկվիր, բայց և ոչ մեկին էլ մի՛ ենթարկիր քեզ: Թե՛ հպատակվելն ու ենթարկվելը և թե՛ բռնությունն ու ճնշումը մարդկության ամենից արգահատելի երևույթներն են:

Հիշի՛ր՝ ամեն մարդ քո նմանակն է: Ամեն մեկի մեղքը նաև քո մեղքն է, և բոլոր անմեղներն իրենց անմեղությունը սիրում են քեզ հետ:

Ամենուր փնտրի՛ր բարին, ազնիվը, արդարն ու անաչառը և հայտնաբերելուն պես իր թաքստոցից լույս աշխարհի հանի՛ր. թող բարությունը ողողվի լույսով, լինի անկաշկանդ ու անբռնազբոսիկ ու չամաչի ինքն իրենից:

Աչքի լույսի պես պահի՛ր մարդկայնության ամենաչնչին նշույլն անգամ, քանի որ դա է, որ ընդդիմանում է մահվանը, թեև, ցավոք, անցավոր է: Ամեն բանի մեջ դի՛ր լուսավորը, մաքուրն ու անկեղծը, այն, ինչը երբեք չի կարող արատավորվել:

Եթե որևէ մեկի սրտում առաքինությունը թաքնված է՝ արար աշխարհի ծաղր ու ծանակից մազապուրծ եղած, քաջալերի՛ր նրան:

Խմի՛ր դառնության բաժակը ցմրուր, որ գնահատես և խորությամբ զգաս հաղթանակի ու հաջողության բերկրանքը:

Մի՛ խաբվիր արտաքին տպավորությամբ. դա վայել չէ պայծառատես, աչք ու բարի սիրտ ունեցողին: Կյանքիդ ժամերն ապրի՛ր այնպես, որ ...

1. Շարունակի՛ր անավարտ միտքը առնվազն երկու նախադասությամբ: (2 միավոր)
2. Հղի՛ր քո պատգամը աշխարհին: (1 միավոր)
3. Մեկնաբանի՛ր *Ամեն մեկի մեղքը նաև քո մեղքն է, և բոլոր անմեղներն իրենց անմեղությունը սիրում են քեզ հետ* նախադասության երկու հատվածները: (2 միավոր)
4. Բացատրի՛ր *դառնության բաժակը խմել, դատարկը պարսպի մեջ լցնել* դարձվածքները: (1 միավոր)
5. Գրի՛ր տեքստում ընդգծված նախադասության շարահյուսական հոմանիշը: (1 միավոր)
6. Տեքստից դուրս գրի՛ր տարբեր խոսքի մասերով արտահայտված չորս ստորոգելիներ՝ նշելով խոսքիմասային պատկանելիությունը: (1 միավոր)
7. Գրի՛ր *անքույթ, արգահատելի, նշավակել, հերյուն, ցմրուր, խսիր, հտպիտ, կամային, նորատի, ստամբակ* բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
8. Տրված եռյակներից ընտրի՛ր մեկական բաղադրիչ և կազմի՛ր բարդ ածանցավոր 4 բառ. փայտահատ-խրախճանք-հարգարժան, սարսռազդու-նվազածու- ձերբակալել, ուսումնաստենչ-առինքնել-վերակառուցում, անստորագիր-սրբազան- թովչանք: (2 միավոր)
9. Բացատրի՛ր *տաղանդը հողի մեջ թաղել* և *դռնկիխոտյան արկածախնդրություն* թևավոր խոսքերը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունը: (2 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «Դարերի աննկուն ճամփորդը» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)